

– Հայկական կերպարվեստը բոլոր ժամանակներում տվել է մեծ վարպետներ: Նույնիսկ ամենածանր շրջանում, ամենադժվարին տարիներին, երբ անգամ պետականություն չենք ունեցել, ապրել ու ստեղծագործել է Հակոբ Հովնաթանյանի նման հանճարը: Էլ չեմ խոսում մեր հանճարեղ մանրանկարիչների մասին, որոնք աշխարհով մեկ հանրահայտ են: Եթե նրանց հիմա աշխարհը չի ճանաչում, դա մեր ազգի փոքրաթիվ լինելու դժբախտության, մեր մեղքը լինելու հանգամանքով միայն պիտի բացատրել:

Շատ ցավալի է, որ նույնիսկ ամենամեծ հայ նկարիչները, ինչպիսիք

# Գերմանացի արվեստաբանը 20-րդ դարի նշանավոր նկարիչներից է համարում Ռուդոլֆ Խաչատրյանին

***Գերմանական (PAC Peoples Art Company) մշակութային կազմակերպությունը նախնական պայմանագիր է կնքել հայ նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի հետ՝ նրա ստեղծագործությունների ցուցահանդեսը Գերմանիայում եւ Եվրոպական համագործակցության մյուս երկրներում կազմակերպելու համար:***

***Ռուդոլֆ Խաչատրյանին ուղարկված նամակում նրա տնօրեն Հենրիխ Կեգլերը մասնավորապես գրում է. «Ձեր ստեղծագործությունը եզակի երեւույթ է, որի նշանակությունը կարող է բաղդատվել 20-րդ դարի ականավոր նկարիչների գործունեության հետ»:***

***Գերմանական կազմակերպության կնքած պայմանագիրն ու նրա տնօրենի նամակը Արմենպրեսի թղթակցի խնդրանքով մեկնաբանում է անվանի արվեստաբան Հենրիկ Իգիթյանը.***



են, ասենք, Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանը, Երվանդ Քոչարը, Մարտիրոս Սարյանը, Յակուլովը, լայն աշխարհ դուրս գալու հնարավորություն չեն ունեցել: Կյանքից մեր լավագույն նկարիչների մի խումբ հեռացավ առանց աշխարհին ներկայանալու. Մինասը, Վրույր Գալստյանը, Աշոտ Հովհաննիսյանը: Աշխարհը նրանց չգիտե: Լավագույն դեպքում սփյուռքում են հայտնվել: Դա շատ քիչ է, աշխարհի մեջ ընդամենը մի փոքրիկ կետ է:

Սա ցավալի է, քանի որ մեր նկարիչներն արժանի են համընդհանուր ճանաչման, որովհետեւ միակ ասպարեզն այսօր, որով մենք կարող ենք հանգիստ դուրս գալ համաշխարհային մշակույթ (իհարկե, չհաշված կինոյի մի քանի դեպքեր Փարաջանովով, Փելեշյան, երաժշտությունը Արամ Խաչատրյան, Տերտերյան), հայկական կերպարվեստն է:

Այս առումով՝ ինձ շատ են ուրախացնում Ռուդոլֆ Խաչատրյանի վերջին ցուցահանդեսները, որոնցից մեկին բախտ եմ ունեցել ներկա գտնվելու, բացման խոսք ասելու, վարելու մամլո ասուլիսը Մոսկվայում, Տրետյակովյան պատկերասրահում, էդ բախտին ո՞վ է արժանացել: Հոյակապ դահլիճում:

Հետո: Մարդիկ սովոր են ստերեոտիպին: Բոլորն ընդունել են Ռուդոլֆ Խաչատրյանին, որպես նկարիչ, որը կարող է, ասենք, նստել եւ մանրակրկիտ դիմանկար նկարել: Ես գիտեմ դա. ինձ նստեցրել է եւ նկարել ուղիղ մեկ ամիս. ամեն շտրիխ, ամեն մազ ու մազանոթ: Այսինքն նա ապացուցել է, որ դա կարող է անել: Հիմա ոնց որ ինքն իրեն գերի պիտի դարձնի, որ դուր գա ժողովրդին անընդհատ եւ քաղքենի մասսային, որը չի ուզում ընդունել, որ այդ մարդն իրավունք ունի իր մեջ նոր պոտենցիալ ուժեր գտնելու, նոր խոսք ասելու արվեստում:

Երվանդ Քոչարը քանի՞ շրջան անցավ: Ամեն մեկիս արվեստագետի այս կամ այն շրջանը կարող է դուր գալ, սուբյեկտիվորեն կարող է ավելի ջերմ լինել, ավելի մատչելի, բայց դա չի նշանակում, որ մենք նկարչին պիտի սահմանափակենք, վանդակի մեջ դնենք:

Ես շատ ուրախ եմ, որ մեծ համբավ ձեռք բերելուց հետո Ռուդոլֆ Խաչատրյանը կարողացավ հանդես գալ նոր տեսքով, նոր որակներով, շատ ավելի այսօրվա ժամանակի խոսք ասելով: Նա ցանկացած պահի էլ կարող է վերադառնալ իր դասական նկարչությանը:

Մարդը ազատ լինելու համար պիտի շատ ուժեղ լինի, շատ տաղանդավոր: Ռուդոլֆը ազատ է: Պիկասոն մի օր արթնանում էր, նկարում էր նատուրալիստական դիմանկար, իսկ հաջորդ օրը հենց, ոչ թե տարիներ անց, նկարում էր լրիվ դեֆորմացված դիմանկար: Ազատ մարդ էր: Սա էկլեկտիկա չէ, սա ազատություն է:

Այնպես որ մենք պիտի ողջունենք, որ Ռուդոլֆ Խաչատրյանը այն, ինչ մտածում է արդեն այս քանի շերտից հետո, դուրս բերի, կոպիտ ասած, լայն հրապարակներ, փողոց դուրս բերի արվեստը: Այն, ինչ չկարողացավ իր սիրելի վարպետը, սիրելի ուսուցիչ Երվանդ Քոչարը, որը ստեղծեց գեղանկարչություն տարածության մեջ, պիտի իրականացնի Ռուդոլֆ Խաչատրյանը՝ Քոչարի արժանավոր աշակերտը:

**ՎԱՆԻԿ ՍԱՆԹՐՅԱՆ**
**Արմենպրեսի թղթակից,**
**Հատուկ «Ազգ»-ի համար**



**ՔԱՂԱՔ ԱԲՈՎՅԱՆ**

# Գիտական նստաշրջան՝ նվիրված Խաչատուր Աբովյանի մահվան 150-ամյակին